Պետրոս Դուրյան

Հայրիկն հայոց

Փութա՛, հովվապե՛տ, սիրող հար ազատ՝
Հարազատ,

Փարատի՛ սև ամպ, փայլի՛ արդ արև
Արդարև,

Փողփողի՛ն դաշտեր, ազատ առնե՛նք քայլ,
Առ նենգ գայլ

Ցրցո՛ւր ցուպդ, Հայերն կանչե՛ յարոտ մի՝
Հար հոտ մի:

Ճանկեր արյունոտ կուրծ մեր թափ առինք,
Թափառի՛նք,

Եկո՛, հովվե՛ մեզ, սիրածդ, ազգասե՛ր,
Ազգ ա՛ս էր:

Դու գրթոտ նրման երկնի հայրիկին՝
Յայր՝ ի կին՝

Յորոց և յալիս սփռե՛ լույս և սեր,
Լո՛ւյս եւս, է՞ր

Ցավի, չը զարթնու հրրճված յայգուն յայն
Յա՛յ, քուն Հայն:

Սոխակ մ՚էիր մերթ ի նոճս, ւ՚երգերդ՝
Վերքերրդ

Առած բյուրավոր՝ դեռ դու կանչեցիր,
Կա՛ն, չ՚է՛ցիր

Երգերդ միշտ մեր սիրտ, սիրո, հոգվո ձա՛յն,
Յ՚ոգվոց Հայն

Հանեց, վառեցավ ձայնեդ, իմացավ
Հիմա ցավ.

Քե՛զ խնդրե Հայն արդ, ամբոխ ամբոխ չ՚է՛,
Ամբողջ է.

Արդ ըսե՛ Հայուն, ըրե՛ ազդ անոր
Աստանոր.

Ես կարոտ եմ վառ սրտից, ձեռքերի,
Ձեր գերի

Եղբարքն ազատե՛լ, լո՛ւյս տալ ՝ի Մասիս,
Ի մաս յ՚իս

Առնել իմ նախնյաց արյուն արտսուքեն.
Արդ սուգեն

Ելնեն Հայք՝ օրհնեն սիրով հավետ իս՝
Յ՚ավետիս.

Ցանկամ որ Հայք ինձ ըսեն ա՜հ, յամայր
«Ահա՛ մայր».

Այս իմ վերջին տենչ, միշտ ճետք Հայկա կա՜ն
Հայկական:

1869